ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

0015, Երևան, Արգիշտիի փողոց 1

№ 4389-Ա « 29» սեպտեմբերի 2008 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՌԵԺԻՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2008թ.սեպտեմբերի 4-ի նիստի «Բնակչության հատուկ սպասարկման ծառայությունների համակարգի առողջացման, աշխատանքների թափանցիկության, դիակիզարանների ստեղծման միջոցառումների ծրագրին հավանության տալու մասին» հ. 36 արձանագրային որոշման 1-ին կետի հանձնարարականի և « Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների պահանջները.

1.ՈՒԺը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2004թ. հունվարի 9-ի «Երևան քաղաքի գերեզմանատների շահագործման ռեժիմ սահմանելու մասին» հ.13-Ա որոշումը:

2. Սահմանել Երևան քաղաքի գերեզմանատների իրավական հատուկ ռեժիմ /մասնակի փակ, բաց/ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել « Բնակչության հատուկ սպասարկում » ՊՓԲԸ-ի տնօրենին.

3.1 ղեկավարվել սույն որոշմամբ, հուղարկավորությունների տեղի ընտրությունը կատարել պահպանելով գերեզմանատների իրավական հատուկ ռեժիմի պահանջները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավելվածում նշված գերեզմանատների սահմաններից դուրս ինքնակամ հողազավթումները կանխելու ուղղությամբ:

3.2 Բաց գերեզմանատներում հուղարկավորությունների կազմակերպման համար նախատեսված ազատ տեղերը սպառվելու դեպքում, ներկայացնել առաջարկություններ գերեզմանատների իրավական հատուկ ռեժիմը փոխելու նպատակով:

4. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետին սույն որոշումը լուսաբանել զանգվածային լրատվության միջոցներով:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետի և «Բնակչության հատուկ սպասարկում» ՊՓԲԸ-ի տնօրենի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ե.ԶԱԽԱՐՅԱՆ